
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՍԱՎՈՐ ՈՒՂԻ
(Արտեմ Սարգսյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտեմ Սարգսյանը հայագիտության ամենահայտնի և վաստակաշատ մասնագետներից է: Հայերենի ուսումնասիրության բնագավառում նա արել է այն, ինչ շատ քչերին է հաջողվում:



Արտեմ Եղիշեի (Բագրատի) Սարգսյանը ծնվել է 1942 թ. օգոստոսի 28-ին պատմական Գանձակ (Գյանջա) քաղաքում: 1965 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, ընդունվել Հ. Ա-

Ճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո անմիջապես աշխատանքի է անցել նույն ինստիտուտում, ուր և աշխատում է մինչև օրս՝ անցնելով կրտսեր գիտաշխատողից բաժնի վարիչի ճանապարհ:

Նկատենք նաև, որ Ա. Սարգսյանը 1970 թ. պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ “Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը” թեմայով, որը հայ լեզվաբանության մեջ առաջին փորձն է հին գրական հայերենի կառուցվածքի տիպաբանական քննության առնելու ուղղությամբ:

Գիտական գործունեությանը զուգընթաց գրեթե անընդմեջ տեղ է ունեցել ուսումնակրթականը՝ բուհերում և այլ հաստատություններում, մայր հայրենիքում ու արտերկրում: Ա. Սարգսյանը 1972–1976, այլև 1978–1982 թթ. պաշտոնավարել է Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունում, իսկ 1992–1996 թթ. աշխատել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում, նախ՝ իբրև փոխտեսուչ, ապա՝ տեսուչ:

Բավական լայն է անվանի լեզվաբանի գիտական և լեզվամշակութային հետաքրքրությունների շրջանակը: Նա տասնամյակներ շարունակ հանդես է գալիս որպես հայերենի կառուցվածքի ուսումնասիրող, իբրև հրապարակախոսական պրոֆիլի մշակութաբան, լեզվական մշակույթի անխոնջ քարոզիչ: Հատկանշական է այն, որ Ա. Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ

1978 թ. հիմնվում է «Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստահաղորդաշարը, որի տասնամյակների տքնաջան աշխատանքի գնահատություն է այն, որ հեղինակը 1986 թ. արժանանում է ՀՀ պետական մրցանակի:

Ա. Սարգսյանը 1987 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ (գուգադրական-տիպաբանական քննություն)» թեմայով (իբրև առանձին մենագրություն լույս է տեսնում 1985 թ.)՝ կառուցվածքային և վիճակագրական լեզվաբանության քանակական ճշգրիտ մեթոդներով ցույց տալով նոր գրական լեզվի երկու տարբերակների այն առանձնահատկությունները, որոնք առկա են բաղադրիչ միավորների խորքային մակարդակում:

1968 թ. սկսած, գրեթե անընդմեջ, նա դասավանդել է հանրապետության առաջատար բուհերում՝ Երևանի պետական համալսարանում, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ 1991 թ. ստանալով պրոֆեսորի կոչում: Տարբեր բուհերում նա դասավանդել է գրաբար, ժամանակակից հայոց լեզու, ընդհանուր լեզվաբանություն, հանրալեզվաբանություն և լեզվաբանական աշխարհագրություն: Ա. Սարգսյանի ղեկավարությամբ ատենախոսություններ են պաշտպանել մեկ տասնյակից ավելի երիտասարդ ուսումնասիրողներ՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Անվանի լեզվաբանը գիտահետազոտական աշխատանքը հաջողությամբ զուգորդում է գիտակազմակերպչական գործունեության հետ. 1991 թ. նշանակվում է ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության լեզվաշինության վարչության պետ: Նույն թվականից մի առ ժամանակ եղել է Հայերենի բարձրագույն խորհրդի փոխնախագահ: Նա եռանդուն, գրեթե ամենօրյա մասնակցություն է ունեցել նաև լեզվաքաղաքականության մշակման գործընթացներին: Երկար տարիներ լինելով ՀՀ տերմինաբանական կոմիտեի անդամ՝ կազմել է մի շարք նախագծեր, որոնք վավերացվել են ինչպես սույն կոմիտեի, այնպես էլ հետագայում Հայերենի բարձրագույն խորհրդի կողմից՝ ստանալով օրենքի ուժ:

Ա. Սարգսյանը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ է 2006 թվականից:

Նա մեծ նվիրումով է մասնակցում հայոց լեզվի բարբառների հարուստ բառազանձն ամփոփող «Հայոց լեզվի բարբառային բառարանի» յոթհատորյակի գիտական խմբագրման և հրատարակման գործին (2002–2013 թթ.): Նրա «Հանրալեզվաբանության դասընթացը» (2002 թ.) ներկայացնում է ոչ միայն հանրալեզվաբանության և ընդհանուր լեզվաբանության առանցքային խնդիրները, այլև վերլուծում է այսրկովկասյան տարածաշրջանի լեզվական բարդ համա-

պատկերը, ինչպես նաև՝ երկլեզվության և բազմալեզվության մի շարք յուրահատուկ երևույթներ:

2003 թ. լույս է տեսնում Ա. Սարգսյանի «Լեզվաբանական աշխարհագրություն» բուհական դասընթացը: Այդ ձեռնարկն առաջին փորձն է, որը ներկայացնում է լեզվաբանական աշխարհագրություն առարկայի խնդիրները և նպատակները, հայոց լեզվի բարբառային տարբերակների իրական պատկերը՝ ըստ վիճակագրական տվյալների, բարբառային զուգաձևությունների քարտեզների և այլն: Հետագայում լույս է տեսնում նրա կազմած «Հայ բարբառների ատլասի» առաջին պրակը (2006):

Ա. Սարգսյանի թարգմանությամբ լույս են տեսել Օմար Խայամի քառյակները, անվանի լրագրող Ռ. Մավիսակալյանի հեղինակակցությամբ 1987 թ. հրատարակվեց «Ալեքսանդր Մակեդոնացի» ծավալուն գիրքը (35 տպ. մամուլ, 50 հազար օրինակ): Դրանով առաջին անգամ աշխարհաբար ներկայացվեցին Ալեքսանդր Մակեդոնացու կյանքին և արշավանքներին նվիրված անտիկ պատմության դասական աշխատությունները (Արիանոսի «Ալեքսանդրի արշավանքը» և այլն): Այնուհետև, Ա. Սարգսյանի թարգմանությամբ լույս են տեսել եվրոպական և ռուսական պոեզիայի ընտիր նմուշներ՝ «Ամենը քեզ» եռահատորյակում: Ռուսական պոեզիայի «Արծաթե դարի» բանաստեղծների գործերը թարգմանելու համար պարզևատրվել է Ալեքսանդր Պուշկինի մեղալով:

Ա. Սարգսյանը հեղինակ է «Քսանմեկ հազար օրը», «Եվս չորս հազար օր» և «Հազար օր ևս» կենսապատումների երեք հատորյակի: Նրա սիրած աշխատանքի մի ոլորտը, ինչպես տեսնում ենք, լրագրությունն է. վերջին տարիներին հեղինակած «Դարը» հեռուստահաղորդաշարի համար 2008 թ. նա արժանացել է Թեքեյան մշակութային միության մրցանակի, իսկ մեկ տարի անց նաև Հովհաննես-Պողոս II պապի անվան միջազգային մրցանակի:

Աննկատ չի մնացել վաստակաշատ լեզվաբանի գիտական-լրագրողական բեղուն գործունեությունը, այն բարձր է գնահատվել. պարզևատրվել է «Մովսես Խորենացի» և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալներով, միջազգային բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով՝ Գյոթեի, Լայբնիցի, Ալբերտ Շվայցերի և այլն: «Ամագոն» (ԱՄՆ) հրատարակչությունը 2012 թ. լույս է ընծայել նրա «12. 21. 12. փրկության բանալին» գիրքը հայերեն, անգլերեն և ռուսերեն:

Ա. Սարգսյանն այսօր էլ գիտական, մշակութային և կրթական ձեռնհասությամբ աշխատում է հայագիտության ու հայ մշակույթի անդաստանում, մաղթում ենք նրան նորահար հաջողություններ և ձեռքբերումներ:

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ